Արձանագրություն N 5

ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Ա-25 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Ք.Երևան **27.03.2026թ. ժ. 10:00**

ՀՀ ՆԳՆ կարիքների համար **հանդերձանքի** ձեռքբերման նպատակով հայտարարված **ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Ա-25** ծածկագրով ընթացակարգի նիստում արձանագրվեց՝

Օրակարգ

1. **Տեղեկություններ ընթացակարգի ընթացքի մասին.**

ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Ա-25 ծածկագրով գնման ընթացակարգի **1-ին և 2-րդ** չափաբաժիններով ընտրված մասնակից ճանաչված **«Զենիտ» ՍՊԸ-ին 2026 թվականի մարտի 12-ին** ծանուցվել է պայմանագրի նախագիծը և առաջարկել կնքել այն:

Վերջինս այն ստանալու օրվանից հետո՝ տաս աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր էր ներկայացնել պայմանագրի, որակավորման ապահովումները և պայմանագիրը իր կողմից ստորագրված: Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում չի ստորագրում պայմանագիրը կամ պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի և որակավորման ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

«Զենիտ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետներում չի ներկայացրել պայմանագիրը և ապահովումները, վերոգրյալից ելնելով վերջինս զրկվել է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

2. **Հանձնաժողովը որոշեց՝**

ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Ա-25 ծածկագրով գնման ընթացակարգը **1-ին և 2-րդ** չափաբաժիններով համարվում է չկայացած, քանի որ վերոգրյալ չափաբաժիններով ընտրված մասնակից «Զենիտ» ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիրն ստորագրելու իրավունքից, ուստի հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը գնման ընթացակարգի վերոգրյալ չափաբաժինները հայտարարում է չկայացած:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ «2. մասնակիցը վճարում է հայտի ապահովումը, եթե նա

1) հայտարարվել է ընտրված մասնակից, սակայն հրաժարվում կամ զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից»:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջները և առաջնորդվելով ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Ա-25 ծածկագրով հրավերի պահանջներով՝ «Զենիտ» ՍՊԸ-ի կողմից կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումները ՀՀ ներքին

գործերի նախարարության կողմց հինգ աշխատանքային օրվա ընթացքում կփոխանցվի՝ << Ֆինանսների նախարարություն:

«Գնումների մասին» << օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև **10-րդ օրացուցային** օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվեց որոշում՝ կողմ 3 դեմ 0 :

Հանձնաժողովի նախագահ՝
ՏԿ պետի տեղակալ — Տ. Բաբայան

Հանձնաժողովի անդամներ՝
հանդերձանքի ապահովման բաժնի պետի պարտականությունները կատարող գլխավոր մասնագետ — Դ. Սայադյան

/Ջ. Տիգրանյան

Հանձնաժողովի քարտուղար՝
ՏԿ ԳՀ բաժնի գլխավոր մասնագետ — Ա. Սարգսյան